

# ShakeOut-ի հետհաշվարկ



**Օգտագործեք ստորև հետհաշվարկը, որպեսզի ձեր կազմակերպությունում բոլորը հնարավորություն ունենան մասնակցելու ShakeOut վարժությանը:**

**6 Գրանցեք ձեր կազմակերպությունը,** որպեսզի մասնակցեք [ShakeOut.org/register](https://ShakeOut.org/register).

- Ներառեք ձեր կազմակերպությունից մասնակցող բոլոր մարդկանց թիվը
- Խրախուսեք աշխատակիցներին տանը գտնվելու դեպքում նույնպես կիրառել երկրաշարժերի անվտանգության պրակտիկան:

**5 Հանդիպեք բաժնիղեկավարների** հետ՝ պլանները վերանայելու, որոշելու, թե ինչ մակարդակի վարժություններ է կատարելու ձեր կազմակերպությունը, և ովքեր են մասնակցելու: Վարժությունների ձեռնարկները հասանելի են [ShakeOut.org](https://ShakeOut.org) կայքի ռեսուրսների բաժնում՝ հետևյալ մակարդակների համար ցուցումներով.

- 1-ին մակարդակ՝ պարզ. Կռանալ (կամ տեղում կողպվել), ծածկվել և բռնվել
- 2-րդ մակարդակ՝ հիմնական Կյանքի անվտանգության վարժանք
- 3-րդ մակարդակ՝ միջին. Որոշում կայացնելու քննարկում և վարժանք
- 4-րդ մակարդակ՝ խորացված Բիզնես գործառնությունների քննարկում և վարժանք



**4 Ստեղծեք վարժության պլան,** որը նկարագրում է վարժանքի նպատակները, տեղի ունենալու ժամանակացույցը (նույնիսկ եթե այն պարզապես «Կռանալ/կողպվել, ծածկվել և բռնվել է»), ինչպես նաև վարժությունից հետո հետադարձ կապի ժողով՝ պարզելու համար, թե ինչը լավ անցավ, և ինչը կարելի է բարելավել: Տեղեկացրեք ձեր մասնակիցներին ծրագրի մասին:

**3 Խրախուսեք ձեր ցանցում գտնվող մատակարարներին, կապալառուներին, գործընկեր կազմակերպություններին և այլոց,** որպեսզի մասնակցեն՝ երկրաշարժերին դիմակայելու հմտությունները բարելավելու նպատակով, և նրանց հետ կիսվեք ShakeOut-ի ռեսուրսներով: Դիտարկեք այլ քայլեր, որոնք կարող են նախապատրաստել ձեր կազմակերպությանը, օրինակ՝ որոշակի համաձայնագրերի առկայությունը, որպեսզի ապահովեք, որ այն ծառայությունները կամ ապրանքները, որոնց ապավինում եք, աղետից հետո հասանելի լինեն:

**2 Ստեղծեք աշխատակիցների իրազեկման արշավ.**

- Տեղադրեք ShakeOut պաստառներ և նշաններ ձեր կազմակերպությունում՝ աշխատողներին, վաճառողներին և հաճախորդներին խրախուսելու և հիշեցնելու, որ մասնակցեն:
- Էլեկտրոնային նամակներ ուղարկեք աշխատակիցներին՝ նրանց տեղեկություններ և խորհուրդներ հաղորդելով, թե ինչպես պատրաստվեն տանը և աշխատավայրում:
- Խրախուսեք աշխատակիցներին կիսվել ShakeOut-ի հետ կապված հաղորդագրություններով՝ էլեկտրոնային նամակների և սոցիալական կայքերի միջոցով:

**1 Վարժության ընթացքում վերանայեք և օգտագործեք ShakeOut-ի վերաբերյալ այլ ռեսուրսներ,** ինչպես օրինակ՝

- Աուդիո/վիդեո ձայնագրությունների վարժանքներ
- Երկրաշարժերի ընթացքում անվտանգության և մատչելիության խորհուրդներ ([EarthquakeCountry.org/accessibility](https://EarthquakeCountry.org/accessibility))
- Անհատական ուղեցույցներ խանութներում և այլ իրավիճակներում գտնվող անձանց համար

**0 Կատարեք ձեր վարժությունը ShakeOut-ի օրը (կամ այլ օր, անհրաժեշտության դեպքում)**

- Վարժանքից հետո քննարկումներ վարեք՝ լսելու, թե ինչ են սովորել մարդիկ, և պլանավորեք հաջորդ քայլերը՝ երկրաշարժերի պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:

